**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/05.1/32405-2019**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-184-11.06.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 902 - Ա որոշումը:

Հարգանքով՝

**ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-184-11.06.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ հայտնում է, որ դրանով առաջարկվող կարգավորումները prima facie նման են ՀՀ արդարադատության նախարարի 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 137-Ա հրամանով ձևավորված քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբի և ՀՀ արդարադատության նախարարության կողմից համատեղ մշակվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում տեղ գտած կարգավորումներին, ուստի նախագծի հեղինակներին առաջարկում է հետաձգել նախագծի քննարկումը, դրանով առաջարկվող կարգավորումները քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբի հետ քննարկելու և երկու նախագծերում առաջարկվող կարգավորումները նույնական ձևակերպումներով ամրագրելու նպատակով:

9 հուլիսի 2019 թվականի N 902 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
(ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-184-11.06.2019-ՊԻ-011/0) քննարկելիս կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 9
Երևան

*ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-184-11.06.2019-ՊԻ-011/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** 1.Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք, համարը՝ ՀՕ-248) 29-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Դատավարական գործողությունների ընթացքը եւ արդյունքներն արտացոլվում են արձանագրությունում (բացառության սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերի), որը կազմվել է դատավարական գործողության ընթացքում կամ դրա ավարտից անմիջապես հետո»:

2. Օրենսգրքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«4. Դատավարական գործողությունները արձանագրություններում նկարագրվում են այն հաջորդականությամբ, որով իրականում տեղի են ունեցել: Արձանագրությունում նշվում են դրանց կատարման ընթացքում ձեռք բերված եւ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները (բացառության սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերի), շարադրվում են դատավարական գործողության մասնակիցների հայտարարությունները»:

***Հոդված 2.*** 1.Օրենսգրքի 209-րդ հոդվածի 2-րդ մասի չորրորդ նախադասության մեջ «արձանագրությունում:» բառից հետո լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ. «Այս կարգը չի կիրառվում սույն հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքերում».

2. Օրենսգրքի 209-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-րդ մասով՝

«3.1. Հարցաքննության ընթացքի ձայնագրման եւ (կամ) տեսագրման դեպքում, եթե քննչական գործողության մասնակիցները չեն առարկում, ապա ցուցմունքները, այդ թվում՝ հարցերը եւ պատասխանները հարցաքննության արձանագրության մեջ չեն արտացոլվում: Այս դեպքում ձայնագրությունը եւ (կամ) տեսագրությունն ամրագրվում են երկու նյութական կրիչի վրա, որոնք կցվում են հարցաքննության արձանագրությանը: Նյութական կրիչներից մեկը կնքվում է եւ կարող է բացվել դատարանում՝ սույն օրենսգրքի 337-րդ եւ 342-րդ հոդվածներով նախատեսված դեպքում, իսկ մյուս կրիչը կարող է օգտագործվել քննիչի կամ դատախազի կողմից՝ իրենց դատավարական լիազորություններն իրականացնելու նպատակով: Հարցաքննության ընթացքի ձայնագրության եւ (կամ) տեսագրության նյութական կրիչի կրկնօրինակը դատավարության մասնակիցներին օրենքով սահմանված կարգով տրամադրվում է մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ՝ գործի նյութերին ծանոթացնելու ընթացքում»:

3. Օրենսգրքի 209-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել նոր պարբերություն հետեւյալ բովանդակությամբ՝ «Սույն հոդվածի 3.1-րդ մասում նախատեսված դեպքերում հարցաքննության ավարտից հետո քննիչը վերարտադրում է ցուցմունքի ձայնագրությունը եւ (կամ) տեսագրությունը, ինչի մասին նշվում է հարցաքննության արձանագրությունում: Ձայնագրության եւ (կամ) տեսագրության վերաբերյալ հարցաքննվող անձի

հայտարարությունները քննիչը կամ հարցաքննվող անձը նշում է հարցաքննության արձանագրության մեջ»:

***Հոդված 3.*** 1. Օրենսգրքի 337-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Չի թույլատրվում ցուցմունքների ձայնագրառման վերարտադրությունն առանց նախապես հրապարակելու մեղադրյալի, ամբաստանյալի այն ցուցմունքները, որոնք պարունակվում են համապատասխան հարցաքննության արձանագրությունում կամ դատական նիստի արձանագրությունում: Սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասում նախատեսված դեպքերում դատարանը բացում է հարցաքննության ձայնագրության եւ (կամ) տեսագրության կնքված նյութական կրիչը եւ վերարտադրում է ցուցմունքի ձայնագրությունը եւ (կամ) տեսագրությունը»:

***Հոդված 4.*** Օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2.Վկայի ցուցմունքների ձայնագրառման վերարտադրումը հնարավոր է միայն նրա հարցաքննության արձանագրությունը կամ դատական նիստի արձանագրության այն մասը հրապարակելուց հետո, որտեղ ամրագրված են վկայի ցուցմունքները: Սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասում նախատեսված դեպքերում դատարանը բացում է հարցաքննության ձայնագրության եւ (կամ) տեսագրության կնքված նյութական կրիչը եւ վերարտադրում է ցուցմունքի ձայնագրությունը եւ (կամ) տեսագրությունը»:

***Հոդված 5.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հիմնավորում**

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ

## 1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

### 1.1. Առկա հիմնախնդիրները.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 29-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Դատավարական գործողությունների ընթացքը և արդյունքները արտացոլվում են արձանագրությունում, որը կազմվել է դատավարական գործողության ընթացքում կամ դրա ավարտից անմիջապես հետո»:

Ելնելով մեջբերված օրենսդրական կարգավորումից, ակնհայտ է դառնում, որ դատավարական բոլոր գործողությունները ենթակա են գրավոր արձանագրման, որի հետևանքով քրեադատավարական փաստաթղթաշրջանառությունն այնպիսի ծավալների է հասնում, որ քրեական գործով մեղադրական եզրակացությունները կալանավորված մեղադրյալների համար համապատասխան քրեակատարողական հիմնարկներ բերվում են բեռնափոխադրում իրականացնող ավտոմեքենաներով, այնուհետև դատարանում դրանք մի քանի օր հրապարակվում են մեղադրող դատախազի կողմից[1]:

Իրավակիրառ պրակտիկային հայտնի են արձանագրման թղթային տարբերակի մի շարք կազմակերպական և դատավարական բնույթի խնդիրներ:

**Կազմակերպական խնդիրներից են՝**

- թղթային արձանագրություն կազմելու ավելորդ ժամանակի ծախս,
- հարցաքննության արձանագրության անընթեռնելի ձեռագիր,
- քննչական գործողության ընթացքի ամբողջական արտացոլման անհնարինություն և այլն:

Նշված կազմակերպական խնդիրները բացասական են ազդում մինչդատական վարույթի՝ որպես հանրային ծառայության որակի և արդյունավետության վրա: Հատկանշական է, որ հարցաքննության թղթային տարբերակով արձանագրելու համար միջինում ծախսվում է մեկից երեք ժամ, ինչը նշանակում է, որ վկան, ում հրավիրել են քրեական վարույթն իրականացնող մարմնի մոտ, զուտ թղթային արձանագրություն կազմելու տեխնիկական գործընթացի պատճառով ստիպված նախաքննության մարմնի մոտ գտնվելու է 1-3 ժամ՝ կտրվելով իր աշխատանքային, ծառայողական և առօրեական այլ գործունեությունից: Վկան չպետք է կրի քրեական արդարադատության համակարգի ոչ արդյունավետ կազմակերպման բացասական հետևանք-ները:

Հարցաքննության տեսաձայնագրման դեպքում գործողության ընթացքն ամբողջությամբ թղթային եղանակով արձանագրելու կարգը կարող է առաջացնել նաև դատավարական խնդիրներ: Մասնավորապես՝ տեսաձայնագրման դեպքում նույն քննչական գործողության կատարման վերաբերյալ ամբողջական թղթային արձանագրություն կազմելիս բարձր է հավա-նականությունը, որ կազմված թղթային արձանագրության և տեսաձայնագրության միջև ծագեն անհամապատասխանություններ, այսինքն՝ հարցաքննության տեսաձայնագրու-

թյամբ արձանագրվեն այլ խոսքեր և արտահայտություններ, իսկ թղթային արձանագրության մեջ դրանք նշվեն բոլորովին այլ կերպ: Նշվածը կարող է ապացույցի թույլատրելիությունը վիճարկելու հիմք հանդիսանալ[2]:

Համաձայն սոցիալական հարցման արդյունքների՝ հարցման ենթարկվածների մասնակցությամբ 2015 թվականին կատարված քննչական գործողությունների ընթացքը 71,4% դեպքերում ընդհանրապես չի տեսանկարահանվել կամ ձայնագրառվել: Նշված հանգամանքները վկայում են այն մասին, որ քննչական գործողությունների կատարման ժամանակ ամրագրման տեխնիկական միջոցներ կիրառելու դատավարական կարգը կատարելագործման կարիք ունի:

## 1.2.Խնդրի դատավարագիտական տեսանկյունը.

Ժամանակակից դատավարագիտության մեջ լայն ճանաչում է ստանում քննչական գործողությունների ընթացքը տեսաձայնագրառման եղանակով արձանագրելու մոտեցումը: Դեռևս 1925 թվականին տեսանկարահանման՝ որպես քննչական գործողության ընթացքը ֆիքսելու միջոցի վերաբերյալ Ն.Պ. Մակարենկոն նշել է՝ «Դեպքի վայրի հաջող տեսանկարահանման դեպքում կարող է կազմվել դեպքի վայրի զննության համառոտ արձանագրություն, իսկ հակառակ դեպքում, այն է՝ տեսանկարահանման անհնարինության դեպքում, անհրաժեշտ է կազմել այնպիսի արձանագրություն, որը կներառի բոլոր մանրամասնությունները»[3]:

«Խորհրդային քրեական դատավարության գիտության զարգացման ակնարկի» հայտնի մենագրության հեղինակները դեռևս 1980թ. գրել են, որ ապագայում ձայնագրառումն, անկասկած, քրեական դատավարությունում պետք է լայն տարածում ստանա, դառնա դատական նիստի արձանագրություն կազմելու հիմք, իսկ այնուհետև, հնարավոր է, նաև ամբողջությամբ կփոխարինի նրան[4]:

Քրեական դատավարության պարզեցման այս ուղղության մասին սկսել են հաճախ նշել նաև ժամանակակից ռուս դատավարագետները: Այսպես՝ Պ. Պաստուխովը դոկտորական ատենախոսության մեջ նշում է, որ պետք է վերացնել քննչական գործողության արձանագրությունների մենաշնորհը. ապացույցի այս տեսակը պետք է լինի քննչական գործողության արդյունք-ների ամրագրման այլընտրանքային միջոց: Քննչական գործողության արձանագրոթյուններից, որպես ապացույցների ամրագրման հիմնական ձևից, աստիճանաբար պետք է անցում կատարել դեպի տեխնիկական միջոցների օգտագործումը՝ տեսաձայնագրում, նկարահանում և այլ[5]: Ա. Կուխտան նշում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և էլեկտրոնային կառավարման ստեղծման պայմաններում ապացուցման գործընթացի պարզեցումը և դեֆորմալիզացիան անխուսափելի է: Որպեսզի ապացուցման գործընթացը թղթայինից վերափոխվի ոչ թղթային ձևի՝ պետք է վերանայել հայրենական քրեական դատավարության գիտության հնացած հասկացությունների համակարգը: Անհրաժեշտ է անցում կատարել դատավարության մասնակիցների կողմից տեղեկությունների հավաքագրման նոր տեխնոլոգիաների[6]: Այլ դատավարագետներ նույնպես առաջարկում են պարզեցնել դատավարական ընթացակարգերը և հրաժարվել քննչական գործողությունների ընթացքն ամրագրելու արձանագրային ձևից, եթե քննչական գործողություն կատարելու ընթացքում կիրառվել է տեսանկարահանում[7]:

2017թ. Ռուսաստանում լույս են տեսել քննչական գործողությունների տեսության ոլորտում մասնագիտացած երկու դատավարագետների (Վ. Սեմենցով, Վ. Ստելմախ) մենագրությունները, որտեղ հեղինակները նույնպես առաջարկում են քննչական գործողության տեսաձայնագրությունը դիտել որպես թղթային արձանագրության այլընտրանք: Այսպես, Վ. Սեմենցովը նշում է, որ քննչական գործողությունների կատարման ընթացքում ամրագրման տեխնիկական միջոցների կիրառման դատավարական կարգի կատարելագործումը հնարավոր է տեխնիկական ձայնագրառման և դատավարական փաստաթղթի միասնականության պահպանմամբ, սակայն պետք է նախատեսված լինի արձանագրության նկարագրական մասի կրճատման հնարավորություն՝ մինչև հիմնական տեղեկությունների հակիրճ շարադրումը: Այս կապակցությամբ հարկ է Ռուսաստանի քրեական դատավարության օրենսգրքի 166-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նորմով. «Աուդիո- և (կամ) տեսագրառման կիրառման դեպքում արձանագրության մեջ կարող է շարադրվել քննչական գործողության հակիրճ բովանդակությունը»[8]:

Վ. Ստելմախը նշում է, որ քննչական գործողության ընթացքի և արդյունքների ամրագրման գլխավոր եղանակը պետք է դառնա համապատասխան սարքավորմամբ դրա ձայնագրառումը: Միաժամանակ, դրա կիրառման անհնարինության դեպքում կամ այլ դեպքերում քննիչն իր հայեցողությամբ իրավունք ունի կազմելու քննչական գործողության՝ քրեական գործին կցելու ենթակա արձանագրություն: Այդպիսով, գործողության ձայնագրառումը և արձանագրությունը, կարծես թե, ապացուցման նպատակներով դրանց առաջնահերթության տեսանկյունից փոխվում են տեղերով: Ընդ որում, տեսագրառումը չպետք է

«արգելի» արձանագրության կազմումը: Քննչական գործողության արդյունքների ամրագրման տվյալ ձևերը պետք է հավասար լինեն, իսկ դրանց կիրառումը պետք է տարբերվի՝ ելնելով կոնկրետ իրավիճակից[9]:

Մեկ այլ տեսաբան իր ատենախոսության մեջ նշում է,տ որ տեսաձայնագրառման կիրառման դեպքում քննչական և դատական այն գործողությունների կատարման ժամանակ, որոնց նյութերում ամրագրված է կատարվող գործողության ողջ ընթացքն ու արդյունքները, դրանցում արտացոլելով անհրաժեշտ դատավարական պայմանները, հնարավոր է արձանագրության նկարագրական մասի կրճատում՝ դրան կցելով տեսաձայնագրառման սկավառակը[10]:

Իրականում, քննչական գործողության արձանագրությունը և, օրինակ, տեսագրառումը, ըստ էության, պարունակում են միանման տեղեկատվություն, ինչը հաճախ անարդարացիորեն բարդացնում է քննիչի գործունեությունը: Այնուամենայնիվ, արձանագրություն կազմելուց ամբողջովին հրաժարումը վաղաժամ է թվում՝ չնայած արձանագրման նկատմամբ տեխնիկական ամրագրման բոլոր առավելություններին: Կարծում ենք, դա ապագայի հարց է, երբ կստեղծվի համապատասխան իրավական հիմք և կապահովվի նախնական քննության մարմինների տեխնիկական հագեցվածության պատշաճ մակարդակ: Անհրաժեշտ է արձանագրման և տեխնիկական ամրագրման ողջամիտ համադրություն: Քրեական գործում պետք է պարտադիր կերպով առկա լինի ամրագրման տեխնիկական միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն պարունակող դատավարական

փաստաթուղթ, ինչպես նաև քննչական գործողությունների կատարման ընթացքում ձեռք բերված տեղեկությունների հակիրճ շարադրանք:

Ելնելով վերը շարադրվածից, կարծում ենք, որ նպատակահարմար կլինի տեսա-ձայնագրման դեպքում զուգահեռ կիրառել թղթային արձանագրությունը, որտեղ կներկայացվի հարցաքննության կատարման տեղի, ժամանակի, մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև հարցաքննության մասնակցի հայտարարությունները: Նշված արձանագրությանը պետք է կցվի համապատասխան էլեկտրոնային կրիչը, որը կպարունակի քննչական գործողության բովանդակության ամբողջական արտացոլում:

### 1.3. Խնդրի իրավահամեմատական տեսանկյունը.

Շարադրվածի կապակցությամբ, հարկ ենք համարում անդրադառնալ սույն աշխա-տության շրջանակներում բարձրացված հարցի օրենսդրական կարգավորումների արտասահմանյան փորձին: Օրինակ՝ Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասը ամրագրում է՝ «Այն դեպքում, երբ մինչդատական վարույթում կատարվող դատավարական գործողության ընթացքը ֆիքսվում է տեխնիկական միջոցների գործադրմամբ, այդ մասին նշվում է արձանագրության մեջ:

Այն դեպքում, երբ տեխնիկական միջոցների գործադրմամբ ֆիքսվում է հարցաքննու-թյան ընթացքը, ապա դատավարական գործողության մասնակիցների կողմից առարկության բացակայության պայմաններում ցուցմունքների տեքստը կարող է չշարադրվել համապատասխան արձանագրության մեջ: Այս դեպքում արձանագրության մեջ նշում է կատարվում այն մասին, որ ցուցմունքներն ամրագրված են տեղեկատվության կրիչի վրա, որը կցվում է արձանագրությանը»:

Լատվիայի քրեական դատավարության օրենքի (2016թ. խմբագրությամբ) 141- 143–րդ հոդվածները սահմանում են քննչական գործողությունների ընթացքը և արդյունքներն ամրա-գրելու կարգը: Այսպես՝ 141–րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննչական գործողությունները սովորաբար արձանագրվում են: Նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ քննչական գործողությունների ընթացքը և արդյունքները կարող են ամրագրվել ձայնագրությամբ կամ տեսագրությամբ: Օրենքով նախատեսված դեպքերում քննչական գործողությունների ընթացքը և արդյունքները կարող են ամրագրվել միայն եզրակացությունում, հաղորդումներում կամ հաշվետվություններում[11]: Օրենքի 143–րդ հոդվածն առանձին կարգավորում է ձայնագրությունների և տեսագրությունների օգտագործման կարգը: Նշված հոդվածի 4–րդ մասի համաձայն՝ եթե քննչական գործողությունների ընթացքը ձայնագրվել և տեսագրվել է, ապա քննչական գործողությունների արձանագրությունը կազմվում է 142–րդ հոդվածով սահ-ման-ված կարգով, սակայն քննչական գործողությունների ընթացքի և հայտնաբերված փաստերի մասին արձանագրության մեջ նշվում են միայն առավել էական փաստերը: Այն ժամանա-կահատվածը, երբ քննչական գործողության ընթացքը չի տեսաձայնագրվել, քննչական գործողության ողջ ընթացքը և հայտնաբերված հանգամանքները նշվում են քննչական

գործողության արձանագրության մեջ: Հատկանշական է, որ նշված հոդվածի 3–րդ մասում ուղղակիորեն ամրագրված է, որ տեսագրության և ձայնագրության մեջ ամրագրված տեղեկությունները գրավոր ձևով ամրագրված տեղեկությունների համեմատությամբ, համարվում են առավել ճշգրիտ և ամբողջական:

Ինչպես նկատում ենք՝ Լատվիայի քրեական դատավարությունում քննչական գործողությունների ընթացքի վերաբերյալ, որպես կանոն, կազմվում է թղթային արձանագրություն: Եթե քննչական գործողության ընթացքը նաև տեսաձայնագրվել է, ապա օրենքը պահանջում է թղթային արձանագրության մեջ նշել միայն գործի համար նշանակություն ունեցող էական հանգամանքները:

Անգլիայի քրեական դատավարությունում սահմանված է, որ բացառությամբ որոշ դեպքերի, հարցաքննությունը կարող է անցկացվել միայն ոստիկանական բաժանմունքում (Օրենսգրքի 11.1 պարագրաֆ): Այն պետք է արձանագրված լինի (աուդիոձայնագրում կամ վիդեոձայնագրում), այսինքն՝ պետք է արձանագրվեն այն հարցերը, որոնք տրվել են և պատասխանները, որոնք ստացվել են: Դա կասկածյալին պաշտպանում է ռիսկից, որ ոստիկանությունը կկեղծի իր խոստովանությունը, իսկ ոստիկանությանը՝ մեղադրյալի և նրա պաշտպանի կողմից նման բնույթի հայտարարություններից: Գործնական կանոնների ժողովածուի «Ե» Օրենսգիրքը պարունակում է հարցաքննության աուդիոձայնագրառման մանրակրկիտ ուղեցույց: Այն պետք է ամրագրվի երկու կրիչի վրա: Դրանցից մեկը կնքվում է հարցաքննության ավարտից հետո կասկածյալի ներկայությամբ: Այդ ձայնագրությունը բացվում է դատարանում ասվածի կապակցությամբ կողմերի միջև վեճի առաջացման դեպքում: Մյուս ձայնագրությունը («աշխատանքային» պատճենը) օգտագործվում է հարցաքննության կարճ գրավոր բովանդակության կազմման համար, եթե մեղադրանք է առաջադրվում: Ոստիկանական որոշ ստորաբաժանումներ ձայնագրում են նաև երրորդ աղբյուրի վրա, որը այնուհետև տալիս են կասկածյալին հանցագործության մեջ նրա մեղադրվելու դեպքում:

Եթե աուդիոամրագրում չի արվում, ապա պետք է հարցման ժամանակ կամ դրանից հետո արձանագրություն կազմվի: Այդ փաստաթուղթն ստորագրվում է անձի կողմից, ով կազմել է այն, ինչպես նաև ծանոթացման համար տրվում է այն անձին, ով հարցաքննվում էր, որպեսզի նա կարողանա ուղղումներ մտցնել[12]:

### 1.4. Խնդրի տեխնիկական ապահովման տեսանկյունը.

Ցուցմունքը հարցաքննության արձանագրության մեջ չարտացոլելու կարգավորման պայմաններում կարող էր որոշակի մտահոգություն ծագել հարցաքննության տեսաձայնագրման տեխնիկական ապահովման վերաբերյալ: Բանն այն է, որ տեսաձայնագրությունը դառնում է ցուցմունքն ամրագրող հիմնական կրիչը: Հարցի տեխնիկական խնդիրը լուծվել է 21.03.18թ. ՀՀ քր. դատ. օր–ի 29–րդ հոդվածում կատարված լրացումներով: Ներկայումս օրենքը քննչական գործողություններ կատարելիս տեխնիկական միջոցների կիրառման նկատմամբ սահմանել է խիստ օրենսդրական պահանջներ, այսպես՝

- հետաքննության մարմինը կամ քննիչը տեխնիկական միջոցներ կիրառելուց առաջ ստուգում է դրանց սարքինությունը.
- տեսաձայնագրառումը պետք է իրականացվի քննչական գործողություն սկսելու պա-

հից, առանց ընդհատման, բացառությամբ անկանխատեսելի տեխնիկական անսարքության կամ այլ օբյեկտիվ պատճառների առկայության դեպքերի.

- տեսաձայնագրառման ընդհատման դեպքում քննչական գործողությունն ընդհատվում է, որի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն, որտեղ նշվում են ընդհատման պատճառների մասին: Քննչական գործողության կատարումը շարունակվում է տեսաձայնագրառումը վերսկսելու պահից.
- տեսաձայնագրառման դեպքում ապահովվում են քննչական գործողության ընթացքի ամբողջականությունը, տեսանելիությունը (ընդգրկվածությունը, լուսավորությունը և այլն) և լսելիությունը.
- տեսաձայնագրառման նյութերը ենթակա չեն մոնտաժման կամ այլ կերպ փոփոխության:

Բացի այս, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ դատավարական գործողությունների ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցների օգտագործման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը: Նման խիստ օրենսդրական պահանջները կապահովեն հարցաքննության ընթացքում տեսա–ձայնագրառման գործընթացի պատշաճ իրականացումը:

ՀՀ դատարաններում երկար տարիներ հարցաքննությունները այլևս թղթային եղանակով չեն արձանագրվում, այլ կազմվում է միայն ձայնագրությունը: Այս պրակտիկան ներդնելու սկզբնական փուլում նույնպես հնչում էին համակարգը չաշխատելու վերաբերյալ վատա-տեսական կանխատեսումներ, մինչդեռ որոշ ժամանակ անց գործնականում դատավարության կողմերի համար աշխատանքային դարձավ դատական նիստերի ձայնագրությունների հիման վրա ճառեր, միջնորդություններ կամ բողոքներ գրելու գործընթացը:

## 2.Առաջարկվող կարգավորման բնույթը.

Օրենքի նախագծով առաջարկվում են նոր իրավական կարգավորումներ, որոնք հանգում են հետևյալին.

**2.1. Հարցաքննության թղթային արձանագրության կազմելը և ցուցմունքի տեսա–ձայնագրառումը արձանագրությանը կցելը.**

Նախագծով նախատեսվում է վկայի և տուժողի հարցաքննությունը կազմել հարցաքննության թղթային արձանագրության տեսքով, եթե տեսաձայնագրառվում է, որտեղ կնշվեն հարցաքննվողի արձանագրային տվյալները և օրենքով պահանջվող այլ տեղեկություններ, բացառությամբ ցուցմունքի բովանդակության: Բանավոր ցուցմունքը տեսաձայնագրառվում է, որն արտացոլվում է երկու նյութական (էլեկտրոնային) կրիչի վրա: Ընդորում նյութական կրիչներից մեկը կկնքվի դատարանում՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում, բացելու և վերարտադրելու նպատակով:

**2.2. Ցուցմունքը ձեռագրով գրելու իրավունքից հրաժարվելը և վկայի ցուցմունքի տեսաձայնագրառման հարցաքննության արձանագրության կցելու մեջ չարտացոլելը:**

Հայտնի է, որ հարցաքննվող անձն իրավունք ունի ցուցմունքը գրել անձամբ, ուստի Նախագծով առաջարկվող կարգավորումը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ անձը հրաժարվում է ցուցմունքն անձամբ գրելու իրավունքից և չի առարկում ցուցմունքներն, այդ թվում՝ հարցերը և պատասխանները հարցաքննության արձանագրության մեջ չարտացոլելու դեմ:

Ընդ որում, նշված առարկությունը վերաբերում է ոչ թե հարցաքննության ժամանակ տեխնիկական միջոց կիրառելուն, այլ Օրենսգրքի 209–րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված կարգով հարցաքննության արձանագրության մեջ ցուցմունքի բովանդակությունը չնշելուն: Վարույթն իրականացնող մարմինը բոլոր դեպքերում ունի լիազորություն հարցաքննության ժամանակ կիրառելու տեխնիկական միջոց, իսկ եթե անձն առարկում է, ապա Օրենսգրքի 209–րդ հոդվածի 3.1-րդ մասը չի կարող կիրառվել: Այլ կերպ ասած, եթե նույնիսկ հարցաքննությունը տեսաձայնագրվել է, սակայն անձն առարկում է արձանագրության մեջ ցուցմունքը չնշելու դեմ, ուստի քննիչը պարտավոր է հարցաքննության արձանագրության մեջ նշելու անձի ցուցմունքը:

**3.Ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվող կարգավորումները կարող են ունենալ հետևյալ դրական արդյունքները:

1. **Հարցաքննության ընթացքի վրա ժամանակային ռեսուրսի խնայողություն:**

1.1. Ժամանակային ռեսուրսի խնայողության հետևանքով կբարելավվի հարցաքննության ընթացքում հանրային ծառայության որակը, և նվազագույնի կհասցվի հարցաքննվող անձի նախաքննության մարմնում գտնվելու ժամանակահատվածը:

1.2. Արձանագրություն կազմելու վրա ժամանակային ռեսուրսի խնայողության հետևանքով կնվազի նաև վարույթն իրականացնող մարմնի ծանրաբեռնվածությունը, և կբարձրանա այլ քննչական գործողությունների կատարման որակը:

1.3. Համապատասխան անձինք կազատվեն հարցաքննության արձանագրություններում գրված քննիչի կամ հարցաքննվողի անընթեռնելի ձեռագիրը «վերծանելու» բարդ ու ժամանակատար գործընթացից:

1.4. Կբարձրանա դատարանում ցուցմունքները հրապարակելու գործընթացի արդյունավետությունը:

**2.Հարցաքննության ընթացքում տեղեկատվության առավել ամբողջական փոխանցում:**

2.1. Հոգեբանության մեջ ապացուցված է, որ խոսքային հաղորդակցության դեպքում փոխանցվում է տեղեկատվության միայն 7 %, մինչդեռ ձայնով և ինտոնացիայով փոխանցվում է տեղեկատվության մինչև 38 %, ժեստերով, դիրքով և մարմնաշարժությամբ՝ օգտակար տեղեկատվության 55%[13]: Հարցաքննության տեսաձայնագրության վերարտադրությունը հնարավորություն կտա փոխանցել առավել շատ տեղեկատվություն, քան թղթային արձանագրությունը:

2.2. Ցուցմունքը թղթային արձանագրությունում չարտացոլելու կարգավորումը կխթանի նաև քննիչների կողմից հարցաքննության ընթացքում տեխնիկական միջոցների առավել

լայն կիրառությանը:

**3.Մարդու իրավունքների խախտման և խոշտանգման կանխարգելում:**

3.1. Հարցաքննության տեսաձայնագրությունն ինքնին կսահմանափակի վարույթն իրականացնող անձի կողմից հարցաքննվողի նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնություն կիրառելու հնարավորությունը:

3.2. Այս կարգավորումը կբարձրացնի դատախազական հսկողության արդյունավետությունը և հնարավորություն կտա դատախազին և դատարանին անմիջականորեն ընկալել տեղեկատվությունը:

---

1Аппарат власти следственной. Под общ. ред. Н.А.Колокова. М.: Юрлитинформ, 2016. – С

2 Ղամբարյան Ա. Հարությունյան Զ. Տեղեկատվական հասարակությունում հարցաքննությունը էլեկտրոնային եղանակով արձանագրելը: Դատական իշխանություն: 2017, թիվ 3(213), էջ 68-73:

3Макаренко Н. Техника расследования преступлений. Практическое руководство для судебных работников. Харьков. 1925. - С.22

4 Алексеев Н. С., Даев В. Г., Кокорев Л. Д. Очерк развития науки советского уголовного процесса/ науч. ред. Н.С.Алексеев. Воронеж: Воронежский ун-т, 1980. С. 218-219:

5Пастухов П.С. Модернизация уголовно-процессуального доказывания в условиях информационного общества. Автореф. дисс. … д-ра юрид. наук. М.: 2015. С. 25.

6Кухта А. А. Доказывание истины в уголовном процессе. Автореф. дисс. … д-ра юрид. наук. Н. Новгород, 2010. С.13.

7Евстигнеева О. В. Использование специальных познаний и научно-технических средств в процессе раскрытия и расследования преступлений. Использование современных технико-криминалистических средств и специальных познаний в борьбе с преступностью : материалы науч.-практ. конф. (24– 25 апреля 1997 г.). Саратов, 1998. С.30.

8 Семенцов В. А. Следственные действия в досудебном производстве: монография. М.: Юрлитинформ, 2017. С. 199.

9 Стельмах В. Ю. Концептуальные основы следственных действий: монография. М.: Юрлитинформ, 2017. С. 211.

10 Сабиров Х. А. Протоколы следственных и судебных действий как вид доказательств в российском уголовном процессе. Дис. ... канд. юрид. наук. Краснодар, 2000.

11 Օրինակ՝ հատուկ քննչական գործողությունների արդյունքներն ամրագրվում են հաշվետվություններում (Լատվիայի քր. դատ. օրենքի 216–րդ հոդված):

12 Барабанов П. К. Уголовный процесс в Великобритании. М.: Изд. «Спутник+», 2015. С. 123-124.

13 Еникеев М. И. Основы общей и юридической психологии. - М., 1996. С.56. Григорян Г. М. Расследование преступлений, совершаемых военнослужащими Вооруженных Сил Республики Армения в районах вооруженного конфликта: Монография. М.: ВУ, 2009. С. 162.